№ 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 2

«Աղբիւրի» գրականական ալբոմ ՅԻՍՈՒՍԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ։
Սարեկ (բանաստեղծութիւն) . . . . . Հասս։
Քիչ էլ, քիչ էլ (հէքիաթ) (շար. և վերջ) . . Ղ. Աղայեանց։
Փոքրիկ երաժիշտներ (պատկեր)
Նաւակ (բանաստ) . . . . . Ք. Թադէոսեան։
Մարտին Լութեր (թարգմ.) . . . . . Փ. Վարդանեան։
Մնաս բարև (Տէնիսընից) (բանաստ.) . . . . . Յ. Յովհաննիսեան։
Կոյրերի և խուլ ու համրերի կարեկիցները . . . Ամբրոս։
Յուսահատ զարիք հիւանդ (բանաստ) . . . . Ցակ. Ղազարեանց։
Մենաքէմ Գամաղացու պատմութիւնը . . . . Յ. Յովհաննիսեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան զրոյցներ։ Աչք և տեսողական պատրանքներ . . . . . Խաչիկ։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սառած լրագիր։ Զբօրհնէք երեկոյին ընթրիք ծերունիների համար։ Գաւառական տպարաններ։ Թէյի առևտուրը Զինաստանում։ Լոնդոնի մեծութիւնը։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Մեծ տօնախմբութիւն։

ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Բերուս։ Շախմատ։ Նախընթաց №-ի մէջ եղած խնդրի և հանելուկների բացատրութիւնները։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

«Աղբիւրը» 1888 թուականում։
Հայը Ղևոնդ Ալիշանի յօբելեանը։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նոր բանաստեղծ (շար. և վերջ) . . . . . Ս. Մանդինեան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Աղբիւրի» նուէրներ. Սպառուած է։ «Աղբիւրի» բաժանորդագրութիւնը. Վաճառանոց. Մի հրաւէր. Արութիւն եւ Մանուէլ. Պրէմիաներ. Գործակալ-աշխատակիցներ. Արտասահմանեան բաժանորդներ. «Տորք անգեղ եւ Հայկանուշ դեղեցիկ». Շահմատ. Նոր գրքեր. Մի նպատ. «Աղբիւրի» լոյս տեսնելը. Մարկաներ. «Աղբիւրի» Պատասխաններ։ Յայտարարութիւններ։

ՍՊԱՌՈՒԱԾ Է «ԱՂԲԻՒՐԻ» ՆԵՐԿԱՅ ՏԱՐՈՒԱՅ № 1-Ը։

Շարունակվում է «Աղբիւրի» 1888 թ. բաժանորդագրութիւնը։ Նոր բաժանորդ գրուողը սպառուած №-ի փոխարէն կըստանայ կամ 50 կ. գրքեր մեր հրատարակութիւններից կամ թէ Լուտեր և Մենաքէմ հրատարակուելիք գրքերից մի-մի օրինակ։

«Աղբիւրի պրէմիաները օտարերկրեայ բաժանորդներին արդէն ուղարկուել է գործակալների միջոցով։ Իսկ Թիֆլիսի այն բաժանորդները, որոնք դեռ չեն ստացել, թող բարեհաճեն ներկայացնելով իրանց անդորրագիրը խմբագրութեանս գրասենեակը («Աղբիւրի» գրավաճառանոց) ստանալ։

«ԱՂԲԻՒՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպ. տ. Միրզոեվի

Թիֆլիսում բացված է «Աղբիւրի» վաճառանոց, յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար: «Աղբիւրի» վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մօնօգրամներ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԳՈՒՆԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ:

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակուող մանկական թերթերի բաժանորդագրութիւն:

Վաճառանոցը կամենալով դիւրացնել գաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները: Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել նրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշաներ: Վարձու է տալիս «Աղբիւրի» ծաղկատառերից և նկարներից:—Վաճառանոցն ընդունում է կօմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ: Վաճառանոցում զետեղուած է և «Աղբիւրի» խմբագրութեան դրասենեակը:

Վաճառանոցը յանձն է առնում գաւառական և գիւղական ուսումնարանների համար կազմել գրադարաններ, քիմիական լաբօրատօրիաներ, ֆիզիկական կաբինետներ, մանկական խաղեր և դպրոցական ու մանկական հասակի վերաբերեալ պարագաներ:

Վաճառանոցը ունի իւր սեպհական կազմարանը, պատրաստում է պատկերների համար ամեն տեսակ և գնանոց շրջանակներ: Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և անյապաղ:

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. Իսկ հեռագրով՝ Тифлисъ „Агбюръ“.

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

(ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարէնը լոյս է տեսնում 12 համար, 3—4 տպագրական թերթից իւրաքանչիւր համարը։

Ներկայ 1888 թուականին դիտաւորութիւն կայ ընդարձակել «ԱՂԲԻՒՐԻ» բ. բաժինը, իսկ ա. բաժինը պիտի աշխատենք, պահպանելով ամսագրի բուն նպատակը և ոգեղութիւնը, դարձնել մի պատկերազարդ հանդէս փոխարինող շքեղ հրատարակութիւն։

«ԱՂԲԻՒՐԻ» 1888 թ. I. պրէմիան՝ ՅԻՄՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄՈԳԵՐԻ ԵՐԿՊԱԳՈՒԹԻՒՆԸ պատկեր օրէօգրաֆիա, արդէն թէ թիֆլիզում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան ի ցոյց բաժանորդների։

1888 «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդ գրուողը հէնց եսկոյն կըստանայ այդ պրէմիան բաժանորդ գրուելուն պէս։

II. Պրէմիան՝ մի ԳԵՂԵՑԻԿ ԳԻՐՔ։ Սա կուղարկուի բաժանորդներին Զատկուայ №-ի հետ։

«ԱՂԲԻՒՐԻ» 1888 թ. III. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի յայտնի «ԱՂԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱԿԸ» վիճակ կրգցուի «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին, ներկայութեամբ Թիֆլիզում գտնուող բաժանորդների և հետաքրքրուողների։ «ԱՂԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱԿԸ» տանող բաժանորդը, եթէ կամենայ, կարող է այն թողնել խմբագրութեանս և ստանալ 100 ռուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, Ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։ V) Այլև այլք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, ֆրեօբէլեան, շախմատի և այլ խաղեր։ Բեբուսներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։ VII) Երգեր՝ ճայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խառն լուրեր։ XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ռ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 3 հատ 7 կ. մարկաներ։

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՐԻՑ ԶԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՈՄ

ՅԻՍՈՒՍԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Января 1888 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԱԱՐԵԿ



Է, սիրուկ սարեկ,
Շուտով մեզ մօտ եկ,
Գեղգեղիր դարուն
Այս մեր դաշտերուն։

Քո պէս-պէս գեղ-գեղ
Թող ամենայն տեղ
Լսելի լինի
Ամեն հողածնի։

Ծառեր, դալարեք,
Եւ գոյն-գոյն ծաղիկ
Ահեն թող շուտով
Գարնան ջինջ ցօղով։

Անտառ, այգեստան,
Պարտէզ, բուրաստան
Թող ակնապարար
Փայլ տան բիւր հազար։

Ծաղիկ ծիրանին,
Սալոր և դեղձին
Բուրմունք, Հոտ անուշ
Տան մարդուս կեանք յոյս։

Սիրունն սարեկ
Եկաւ ու բերեց
Պայծառ արեգակ
Եւ ջերմ եղանակ։

Հալեցին ձիւներ,
Բացուեցին դաշտեր,
Մարդիկ, անասուն
Սկսան գործել։

Դաշտ և ծառաստան
Ծաղկել սկսան.
Ծաղկանց բուրմունքով
Սրտերս լցուեցան։

Լցուած սրտերով
Աղօթենք Աստուծուն,
Որ ամեն տարի
Մեզ ղրկէ գարուն։

Թող պայծառ արև
Եւ կանաչ տերև
Մեզ կենդանութեան
Յոյս տան և բարև։

ՀԱՍՕ

ՔԻԶ Է՞Լ, ՔԻԶ Է՞Լ

(ՀԷՔԻԱԹ)

5.

Շատ ցաւում է մարդ, երբ որ մի բան է կորցնում, թէկուզ այդ բանը շատ փոքր լինի։ Երեխան երբ որ երազումը դանակ է գտնում և միւս օրը տեսնում է, որ գըտած դանակը չըկայ, սկսում է լաց լինել։ Ուրեմն ինչքա՜ն կըցաւէր Քաջիկը, որ ոչ թէ երազումը գտած դանակ էր կորցրել, այլ իւր շնորհքը, իւր բոլոր ուսումը, այն էլ այնպիսի ուսում, որ ոչ ոք չըգիտէր բացի իրանից։ Նա շատ դարդ արաւ, և վերջը մտածեց, որ գնայ Ուխայի կնոջ մօտ պատմէ եղելութիւնը և նորից ձեռք բերէ իւր գիտութիւնը։ Այս մտքով ճանապարհ ընկաւ դէպի Ուխայի բնակարանը, բայց... էլ ոչինչ չըկար... ամեն ինչ ցընդել էր օդի մէջ. ոչ մի հետք, ոչ մի նշան անգամ չէր մնացել։ Քաջիկին թվում էր, թէ ուրեմն ամեն ինչ երազումն էր տեսել, դանակ գտնող ե-

բեխայի նման, բայց չէ, նա աշկարա տեսնում էր իւր այրուած կաշին, իւր չեչոտուած և այլանդակուած կերպն ու կերպարանքը։

Այսպէս դարդ անելով՝ մեր Քաջիկը ճանապարհ ընկաւ դէպի ուրիշ երկիր, որ գուցէ կարողանայ մի նոր արհեստ սովորել և իւր այրուած կաշին առողջացնել։ Շատ գնաց թէ քիչ, Աստուած գիտէ, վերջը հասաւ մի ծովեզերեայ քաղաք։ Այդ քաղաքումը նա լսեց, որ ծովումը մի կղզու վրայ մի երևելի բժիշկ է կենում և նա ամեն ցաւի դեղ գիտէ, ամեն ցաւ բժշկում է։ Նա շաբթէնը երկու անգամ դուրս է գալիս իւր նաւակով և ամեն հիւանդի ասում է, թէ ինչով պիտի բժշկուի. շատ անգամ դեղերն էլ ինքն է տալիս և ոչինչ չի առնում ոչ դեղի և ոչ բժշկութեան համար։

Այս լուրը շատ ուրախացրեց Քաջիկին։ Միւս օրը բժշկի դուրս գալու օրն էր։ Քաջիկը գնաց ծովափ և միւս հիւանդների հետ կանգնեց։ Անթիւ հիւանդներ կային ոչ միայն մօտիկ տեղերից, այլև շատ հեռաւոր երկիրներից։ Շատերը մերձիմահ ընկած էին մահիճների մէջ, նրանց բերել էին պատգարակներով։ Բժիշկը դուրս եկաւ ափը և ամենից առաջ դժուար հիւանդների մօտ գնաց, նրանց ամենքին էլ դեղ տալով, իսկոյն ոտքի կանգնեցրեց և մի քանի խորհուրդ տալով ճանապարհ ձգեց. պատգարակով բերածները վերադարձան իրանց ոտքով։ Յետոյ մօտեցաւ աւելի թեթև հիւանդներին և որին դեղ տուաւ, որին խորհուրդ. ամենից վերջը մօտեցաւ Քաջիկին և ասաց.— Դու կրգաս ինձ հետ, քեզ ինձ մօտ կրբժշկեմ։ Այս խօսքն այնպէս քաղցրութեամբ և մտերմաբար ասաց, որ կարծես նրա մօտիկ բարեկամը և ծանօթը լինէր։ Քաջիկը բժշկի հետ նստեց նրա նաւակի մէջ և թիավարելով՝ դընացին բժշկի բնակարանը։

Բժշկի կղզին մի փոքր կղզի էր, և բացի իրանից

ոչ ոք չէր կենում այնտեղ։ Նա էլ ունէր Ուիսալի նման լաւ տուն ու տեղ, լաւ այգի, բայց բոլորն էլ հասարակ, բնական, ինչպէս սովորաբար լինում են աշխարհի լաւ տներն ու այգիները. միայն աւելի գեղեցիկ, աւելի ճաշակով էր շինուած։ Նրա պարտիզի մէջ ամեն տեսակ խոտ ու ծաղիկ կար. այդ բոյսերը աճում, ծաղկում էին և անուշահոտութեամբ լցնում ամբողջ պարտէզը։ Նրանք ամենքն էլ պէտքական էին, ամեն մինը մի քանի ցաւի դեղ էր։ Նրա տունը զարդարած էր գեղեցիկ կահ-կարասիքով։ Մի մեծ սենեակ գրքերով էր լիքը. մի քանիսը՝ հազար ու մէկ տեսակ բաներով։ Այդտեղ կային զանազան հանքեր, չորցրած բոյսեր, հեղուկ և չորցրած դեղեր։

Բժիշկն սկսեց Քաջիկին հարց ու փորձ անել, և երբ որ իմացաւ նրա գլխի անցքը, ասաց.—Ուրեմն դու կը մնաս ինձ մօտ, ես քեզ այն բաները կրսովորեցնեմ, ինչ որ վայել է մարդուն գիտենալ. քո առաջուան սովորածդ մի անբնական և ցնորական բան է եղել, և ցնորքի պէս էլ ցնդել է օդի մէջ։ Ես քեզ կրսովորեցնեմ բժշկութիւն, բայց առաջ քեզ կրբժշկեմ, որ դու հաւատաս իմ դեղերի զօրութեանը։ Այս ասելուց յետոյ Քաջիկին մերկացրեց և մի տեսակ իւղ քսեց նրա բոլոր մարմնին և երեսին։ Միւս օրը մեր Քաջիկն այնպէս էր, ինչպէս մօրից նոր ծնած. նա ոչ միայն բոլորովին լաւացաւ, առողջացաւ, այլ և աւելի թարմացաւ, գեղեցկացաւ, քան թէ առաջ էր։

Բժիշկը, որքան որ նշանաւոր բժիշկ էր, մի այնքան էլ շնորհալի դաստիարակ էր։ Ինչ որ ուրիշը մի տարուամբ հազիւ կարող էր սովորեցնել, նա մի քանի օրումն էր սովորեցնում։ Քաջիկն էլ լաւ աշակերտ էր, և նրա ուշիմութիւնն էր, որ դրաւում էր բժշկին, եթէ ոչ՝ նա ի զուր տեղը իւր անցաւ գլուխը ցաւի մէջ չէր գցել։ Տեսաւ որ մի շատ շնորհալի տղայ է Քաջիկը, ուզեց մի յիշատակ թողնել իրանից յետոյ, որ իւր տեղը բռնող մէկը լինի։

Քիչ ժամանակից յետոյ մեր Քաջիկը դարձաւ բժշկի քաջ օգնականը, և ամեն անգամ, երբ բժիշկը դուրս էր գալիս ցամաք հիւանդներին բժշկելու, Քաջիկին էլ հետն էր տանում, որ տեսնի, թէ ո՞ր տեսակ հիւանդին ի՞նչ տեսակ դեղով է բժշկում: Դժուար հիւանդներին բերում էին կղզին և իրանց մօտ էին բժշկում: Դրանք այնպիսի հիւանդներ էին լինում, որոնց պէտք էր լինում վիրահատութիւն: Պատահում էր, որ շատերի փորը կտրում էին, ներսի վէրքերը մաքրում, վրան դեղ ածում, փորը նորմէկանց կարում, առողջացնում: Այսպէս անցաւ մի ժամանակ, շատն ու քիչն Աստուած գիտէ, և Քաջիկը շատ բան սովորեց, բայց որքան շատ սովորեց, այնքան շատացաւ սովորելու փափագը և նրան այնպէս էր թվում, թէ դեռ ոչինչ չըգիտէ, որովհետև սկսեց իմանալ, թէ ինչքան բաներ կան գիտենալու, որ ինքը դեռ չըգիտէ:

Բժիշկը որքան որ բարի մարդ էր և ամեն բան սովորեցնում էր Քաջիկին, բայց Քաջիկը կասկածում էր միշտ, թէ նա էլի շատ բան պիտի գիտենայ, բայց իրան չի յայտնում. ճշմարիտ որ բժիշկը շատ բան ծածկում էր նրանից և հէնց իւր անձը, իւր կեանքը, իւր ով լինելը նրանից ծածկած էր պահում, ոչ ոք չըգիտէր նրա ով լինելը: Նրա մի քանի սենեակները միշտ կողպուած էին, և Քաջիկը չըգիտէր ի՞նչ կան նրանցում և ինչո՞ւ է ծածկած պահում: Քաջիկը իւր տարակոյսները չէր յայտնում վարպետին, բայց ինքն էլ չէր բաւականանում իւր սովորածով, միշտ փորձեր էր անում և շատ բժշկական գիւտեր էլ արաւ, որոնց մասին հաշիւ չէր տալիս իւր վարպետին: Վարժապետի ու աշակերտի այս անյարմար յարաբերութիւնը վերջ ստացաւ հետևեալ դէպքով:

Մէկ անգամ մի հիւանդ բերին իրանց հետ կղզի: Բժիշկն այդ հիւանդին տարաւ մի ջոկ տուն, դուռը ներսից կողբեց, որ Քաջիկը ներս չըգնայ: Սրանով արդէն ե-

ըևացրեց, որ շատ բան ծածկում է Քաջիկից։ Քաջիկն այս տեսնելով, շատ նեղացաւ, բայց և ուզեց տեսնել, թէ ինչ է անում Հիւանդին։ Թաքուն բարձրացաւ տանիքի վրայ, նայեց լուսամտից և տեսաւ որ Հիւանդի գլխի սկաւառակը վերցրել է, ուզեղի վրայ մի ինչ որ բղոճ կայ, ուզում է մաշով վերցնել, բայց բղոճը չանգերը մեկնում է ուզեղի փառի վրայ, բժիշկը յետ է քաշում մաշան։ Յետ քաշելու պատճառն այն էր, որ բժիշկն ուզում էր բղոճն այնպէս վերցնել, որ նա իւր չանդերով ուզեղի փառը չը պատռէ։ Քաջիկը երբ որ տեսաւ, թէ շատ է չարչարվում բժիշկը, և հնար չունի անվնաս վերցնելու բղոճը, էլ չըդիմացաւ և բղաւեց տան հերթիկից.

—Մաշան տաքացրո՛ւ, վարպետ, մաշան տաքացրո՛ւ...

Այս որ լսեց բժիշկը, ունելին (մաշան) դէն դցեց և դուրս եկաւ։ Քաջիկն էլ տանիքից իջաւ և փախաւ, կարծելով, թէ վարպետը դուրս եկաւ որ բարկանայ վրան կամ ծեծէ։ Մի ժամու չափ թաք կացած մնաց Քաջիկը, յետոյ կրկին սրտապնդեց և բարձրացաւ տանիքի վրայ, որ տեսնէ, ինչ արաւ վարպետը։ Նայեց տեսաւ, որ վարպետը չըկայ, իսկ Հիւանդը միևնոյն դրութեան մէջ թրմրած ընկած է։ Այս որ տեսաւ, իջաւ տանիքից և ներս գնաց, մաշան տաքացրեց և բղոճի մէջքին դրաւ թէ չէ՝ բղոճը չանչերը ներս քաշեց, կուչ եկաւ, և Քաջիկը վեր առաւ դէն ձգեց։ Սկաւառակը դրաւ տեղը, դեղ քսեց, փսթաթեց, հոտ տուաւ Հիւանդի քթին, և նա իսկոյն փռշտաց վեր կացաւ և ինքն իրան բոլորովին առողջ զգաց։

Հիւանդին բժշկելուց յետոյ՝ Քաջիկը գնաց իւր վարպետին փնտրելու։ Շատ ման եկաւ, և ամբողջ կղզին տակն ու վրայ արաւ, բայց վարպետին չըգտաւ։ Յետ դառնալիս Քաջիկը տեսաւ մի արձանի վրայ դրուած հետևեալ ոտանաւորը—

Մարդս ինչքան էլ լինի գիտնական,
Նրա ուղեղը մազի է նման,
Մի չնչին բանից մազը կըկտրի,
Եւ իմաստունը կըդառնայ անբան։

Այս ոտանաւորը կարդալուց յետոյ, Քաջիկը մտածեց, թէ չըլինի՞ իւր վարպետը խելագարուել է և ինքն իրան ծովն է ձգել։ Եւ ով գիտէ, գուցէ հէնց այդպէս էլ էր։

6.

Բժշկի անյայտանալուց յետոյ Քաջիկն ընկաւ խոր տխրութեան մէջ։ Ի՞նչ չարաբախտ աշակերտ եմ ես, ասում էր ինքն իրան. առաջին վարպետս կրակն ընկաւ, սա էլ ընկաւ ջուրը, ով գիտէ ի՞նչպէս կըլինի իմ էլ վախճանս։ Ես էլ մահկանացու եմ, ես էլ պէտք է մեռնիմ, բայց ինձանից յետոյ՝ էլ ո՞վ կիմանայ, թէ ո՞ր ցաւն ի՞նչպէս էին բժշկում։ Եւ ի՞նչ հարկ կայ թաքցնելու։ Գիտութիւն թաքցնելը լաւ բան չէ։ Արի ես աշակերտներ կը հաւաքեմ ամեն երկրից և ամենքին էլ բժշկութիւն կը սովորեցնեմ . . .

Ճշմարիտ որ՝ Քաջիկի ժամանակ ով որ մի օգտակար բան գիտէր, ուրիշին չէր յայտնում, չէր սովորեցնում։ Ամեն մի բան գիտցող հայը իւր որդուն էր սովորեցնում իւր գիտցածը, նրան էր յայտնում իւր արհեստի գաղտնիքը և այն էլ այն ժամանակ, երբ որ մեռնելիս էր լինում։ Յանկարծ մեռնողներն ու ժառանգ չունեցողները իրանց գիտութիւնն էլ հետները տանում էին միւս աշխարհք . . .

Քաջիկը մնաց նոյն կղզու վրայ և շարունակեց իւր վարպետի գործը։ Նա բաց արաւ կողքած սենեակները և նրանցում գտաւ շատ բժշկարաններ և այն գրքերից սովորեց բոլոր այն բաները, ինչ որ չէր սովորեցրել նրան իւր վարպետը։ Յետոյ իւր մօտ ժողովեց ամեն կողմից շատ

աշակերտներ և ամենքին էլ սովորեցրեց բժշկութեան արուեստը։ Նրա աշակերտներն էլ աշակերտներ ունեցան և այսպէսով բժշկութեան արուեստը տարածուեցաւ ամեն տեղ։ Քաջիկի աշակերտները ամեն տեղ գովում էին իրանց վարպետին և ասում էին, որ նա կարող է մեռածներին էլ կենդանութիւն տալ, բայց այդ բանը չի անում, որովհետև Աստուծոյ Հրամանին ընդդէմ է համարում։

Ճշմարիտ որ Քաջիկը գտել էր և մեռածին կենդանութիւն տալու դեղը, բայց երկար ժամանակ գործ չէր դնում։ Վերջը, ասած է՝ «Մեծ մարդիկների սխալն էլ մեծ կլինի», նա սկսեց մի քանի փորձեր անել։ Դրա համար բարկացաւ Գաբրիէլ հրեշտակը և մտքումը դրեց պատժել Քաջիկին։

Մէկ անգամ Քաջիկը ժողովեց իւր աշակերտներից աւելի հմուտներին և ասաց նրանց.—Ես շատ եմ ծերացել, էլ առաջուան ուժը չունիմ։ Ուզում եմ վերանորոգուիլ, ջահիլանալ, բայց առանց ձեր գնութեան կարող չեմ։ Ես մի դեղ կրխմեմ և կրթմրեմ կամ կրմեռնիմ. դուք կրկտրէք իմ փորս ու կուրծքս, այս ինչ դեղերով կրլուանաք բոլոր փորոտիքս ու թոքերս, կրվերցնէք և դլխիս սկաւառակը, ուղեղիս խորշերը կրմաքրէք այս ինչ դեղերով և կրսրսկէք այս ինչ դեղերը, յետոյ կրմիացնէք ամեն բան ինչպէս գիտէք։ Երբ ամեն բան կրվերջացնէք, ահա այս շիշի դեղը կածէք բերանս. սա մի կենարար հեղուկ է և իմ սեփական գիւտս է։ Երբ որ կրկատարէք ճշտութեամբ բոլոր իմ ասածները, ես կրյայտնեմ ձեզ այս հեղուկի ձեռք բերելու հնարը։

Աշակերտները պատրաստականութիւն յայտնեցին և պատրաստեցին իրանց վիրահատութեան սուր-սուր դանակները։ Քաջիկը մի դեղ խմեց, թմրեց, աշակերտները ճարտարութեամբ կատարեցին ամեն բան։ Մնաց վերջին կենարար հեղուկը, որ պիտի ածէին բերանը։ Գաբրիէլ հր-

ըեշտակը աներևութապէս կանգնած էր նրանց մօտ և նրանց արածը մի տեսակ օյինբազութիւն համարելով ծիծաղում էր։ Վերջին հեղուկը որ ուզեցան ածել Քաջիկի բերանը, հրեշտակը խփեց թևովը և շիշը վայր ընկաւ աշակերտի ձեռքիցը և բոլոր հեղուկը վայր թափուեց ցնդեց, մի կաթիլ միայն ընկաւ Քաջիկի բերանը։ Այդ մի կաթիլը կէս շունչ և կէս կեանք տուաւ Քաջիկին, և նա կանչեց—

—Քիչ էլ, քիչ էլ . . .

Ուզում էր ասել «էլի մի քանի կաթիլ կաթեցրէք», չիմանալով, թէ ինչ փորձանք է պատահել շիշի գլխին։

Այսպէս ահա խեղճ Քաջիկը մինչև այսօր էլ կայ, ոչ մեռած է և ոչ կենդանի, և անդադար կանչում է—Քիչ էլ, քիչ էլ . . .

Այսպիսի մի վախճան է ունեցել և երևելի Լոխման հէքիմը։ Նա էլ իւր կեանքի վերջումը Քաջիկի նման մի փորձ է արել և մինչև այսօր կանչում է բարակ ձայնով —Բէր ուզ... բէր ուզ։ Բերանն այնքան բաց չի լինում, որ կարենայ ասել—բիր ուզ, բիր ուզ, որ նշանակում է՝ մի քիչ, մի քիչ, այսինքն մի քիչ էլ, մի քիչ էլ...

ԲԱՅԱԹԻՒ

Հրեշտակ ջան, քիչ էլ, քիչ էլ,
Խնդրում եմ քիչ էլ, քիչ էլ,
Կեանքիս թելը մի կտրիլ,
Թող ապրիմ քիչ էլ, քիչ էլ . . .

Ասում եմ քիչ էլ, քիչ էլ
Խնդրում եմ, քիչ էլ, քիչ էլ։
Քաջիկի օրն եմ ընկել,
Կանչում եմ՝ քիչ էլ, քիչ էլ . . .

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՓՈՔՐԻԿ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

ՆԱՎԱ

ռում է ծովը. շրջում է քամին.
Ծովի անդունդից լեռներ են բուսնում,
Իրար ընդհարվում, զարկվում զայրագին,
Փշրվում, նահանջում, նորից բարձրանում։

Ծփում է ալեաց մէջ մի փոքրիկ նաւակ,
Նա մերթ բարձրանում, մերթ տակն է իջնում.
Յուզուած, կատաղած ծովը անյատակ
Անպաշտպան նաւին կլանել է սպառնում։

Բայց նա պաշտպանվում, մաքառում է դեռ.
Գալարվում է ծովն վիշապի նման.
Ամուր թիերի ուժգին հարուածներ
Դեռ դէմ են դնում ալեաց ընդհարման։

Զառաչեց քամին, ծովը փքուեցաւ.
Փշշան այիքներ եկան կուտուեցան.
Ահա բարձրացաւ, անդունդ նետուեցաւ
Զարաբաիտ նաւը փետուրի նման։

Բայց փրփուրի մէջ, ծովի երեսին
Կրկին երևաց նաւակը ահա.
Զարժվում են նորա թիերը ուժգին.—
—Մի՞թէ, ո՞վ Աստուած, փրկուելու չէ՞ նա։

Ք. ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ

2.

Այն միջոցին Գերմանիայի մէջ ապրում էին ասպետներ։ Դրանք զրահաւորուած էին վերտով, սաղաւարտով, պահպանակով. ձի որ նստէին, կողքից սուսեր էին կապում, մի ձեռքով վահան էին բռնում, միւսով՝ նիզակ։ Ամեն մի ազնուական ասպետ դառնալիս ուխտ էր դնում եկեղեցին աւազակներից պաշտպանելու, հեթանոսների դէմ պատերազմելու, այրիներին և որբերին օգնելու։

Քանիցս անգամ ասպետները պատերազմով Երուսաղէմ գնացին, որ Քրիստոսի գերեզմանը տաճիկների ձեռքից ազատեն. բայց թոյլ գտնուելով՝ չկարացան տիրել գերեզմանին։

Ասպետները բարձր պալատներ էին շինում սեպ ժայռերի վրայ և նստում էին այնտեղ, ասես թէ բունի մէջ։ Այս պալատները շրջապատուած էին քարէ պարսպով և բարձր աշտարակներով. պարիսպի չորս կողմը փոս էր անցնում, փոսի միջից՝ ջուր։ Պատուհանների մէջ շինուած էին երկաթէ վանդակներ, դռները փակվում էին երկաթէ նիզերով և պահպանվում առանձին զինուորներով։ Պարսպի վրայից, որքան էլ մարդուս աչքը զօրէր, բոլոր դաշտը երևում էր։ Պալատի մէջ մտնելու համար պէտք էր, որ նախ փոսի վրայից շղթաներով կամուրջ ձգուէր։ Իսկ եթէ կամուրջը չձգէին և սկսէին աշտարակից քար, նետ, տէգ արձակել եկողի վրայ կամ հրացան պարպել և ռումբեր պայթեցնել,—այն ժամանակ հնար չէր լինիլ ներս մտնել՝ ոչ ձիով, ոչ ոտքով։

Այս տեսակ պալատները դղեակ էին կոչվում, և բոլոր Գերմանիան դրանցմով լիքն էր։ Լերան ստորոտը, դղեակների ներքև գիւղեր էին նստած. այնտեղ ճորտերն էին ապրում։ Շատ և շատ ծանր էր այս ճորտերի կեանքը. նրանց խրճիթները փոքր էին, աղքատին. տաւարը—նիհար, վտիտ, անզօր. աշխատանքը—ծանր, դժուար, բայց արդիւնքը ստիպուած էին ասպետներին տալ։ Սրանից զատ՝ ճորտերը պարտական էին զինուորական պաշտօն վարել ասպետների զօրքի մէջ, պատերազմ գնալ նրանց հրամանով և ամեն տեսակ ծառայութիւն կատարել։

Հաշտ կեանք չէին վարում այդ ասպետները, միշտ յարձակվում էին իրար վրայ, և նրանց անվերջ կռիւներից շատ ժողովուրդ էր կորչում։ Միայն տօն օրերին հանգիստ էին ճորտերը։ Կիւրակէ եղածին պէս հագնում էին նոր շորեր և երեխաներին հետներն առած գնում էին եկեղեցի՝ պատարագ լսելու։ Այնտեղ երգիոն էր հնչում, պատէրն երգում էր, դեղջուկները ծունր էին դնում և Աստուծոյ առջև աղօթում... Աղօթքը գերմաներէն էին ասում իրանց համար, իսկ պատարագը լատիներէն էր կատարվում։ Ժողովուրդը բոլորովին չէր հասկանում այս լեզուն և պատարագը վերջանալուն պէս՝ գնում էր դէպի տուն, առանց բնաւ գիտենալու, թէ ինչ կարգաց պատէրն եկեղեցւոյ մէջ և կամ ով էր այն սուրբն, որին տօնեցին։

Բոլոր լատինական պատէրների և վարդապետների իշխանը պապն էր։ Պապի աթոռը գտնվում էր Իտալիա, Հռովմ քաղաքի մէջ։ Նա ունէր մի հոյակապ պալատ Վատիկան անունով, որի մէջ կար 11,000 սենեակ, և բնակւում էր այնտեղ իւր վարդապետների և սրանց փոքրաւորների հետ։ Պապն ունէր սեփական դանձարան և առանձին պահապան զօրք. պատերազմում էր՝ ում հետ և կամենար, և կառավարում էր ամբողջ լատինական աշ-

խարհը, երբև իսկական թագաւոր։ Հագնում էր սպիտակ, երկար հանդերձ, մանէր գալիս միշտ վեց ոսկեսարք նըժոյգ լծած շքեղ կառքով. ետևից գնում էին երկու դատարկ կառքեր, երկու կողմից՝ տասն վեց կառդինալներ (եպիսկոպոսներ)։ Պապի մօտ միշտ գտանվում էին սպառազէն թիկնապահներ։ Ո՛ւր էլ գնար, ժողովուրդը ծունր էր չոքում նրա առջև և համբուրում այնտեղն, ուր որ ոտք էր դրել։

Պապն ոչ ոքին չէր ճանաչում իրանից բարձր և աւագ։ «Ես Աստուծոյ փոխանորդն եմ», ասում էր. «Թագաւորների թագաւորն եմ, ում ուզենամ՝ աթոռ կրտամ, ումից ուզենամ՝ կրխլեմ—չկայ ինձանից բարձր իշխանութիւն։ Պետրոս առաքեալը մեռնելիս ինձ տուաւ արքայութեան բանալին և ինձ կարդեց Քրիստոսի փոխանորդ. ես կարող եմ կապել և լուծել մեղքերը, իմ մէջ է բնակում Աստուծոյ ոգին, ես ազատ եմ մեղքերից և անսխալական եմ»։—Ժողովուրդը հաւատում էր նրան և պաշտում էր ոուրբի տեղ։

Բոլոր լատինական եկեղեցիներն և վանքերը պապի իշխանութեան տակ էին։ Հռոմից պապը կոնդակներ էր առաքում բովանդակ աշխարհի լատինական վիճակներին։ Այսպիսի մի հրովարտակ կոչվում էր բուլլա։ Բուլլաներով ծանուցվում էր աշխարհին պապի ողորմութիւնը կամ բարկութիւնը։ Ով որ պապին հաճելի չէր, պապը նրան բանադրում էր և մերժում եկեղեցուց։ Բանադրուած մարդուն սուրբ հաղորդ չէին տալիս, ժամ մանել արգելում էին։

Երբեմն պապը զայրանում էր այս կամ այն թագաւորի վրայ և բանադրանք էր առաքվում թէ նրան և թէ բոլոր հպատակներին։ Այն ժամանակ վանքերն և եկեղեցիները փակվում էին, պատէրները ժամ ասելուց դադարում էին. ոչ մի տեղ զանդահարութիւն չէր լսվում,

պատարագ, պսակ, կնունք, չէր լինում, մեռելներին թաղում էին առանց աղօթքի և բոլոր ժողովուրդը մնում էր մեծ վշտի և տառապանքի մէջ։ Բանադրուած թաղաւորից ամենքը հրաժարվում էին թէ ազգականները, թէ բարեկամները և թէ ամբողջ ազգը։ Նրանից փախչում էին, ասես թէ ժանտախտից. քիչ է, որ հպատակներն այլ ևս չէին հնազանդում նրան, այլ դեռ հալածում էին, վախենալով, որ իրանք էլ պապի նզովքի տակ չընկնէին։ Զօրեղ և ազդու էր պապի խօսքն և նա միայն կարող էր յետ առնել այդ խօսքը, ուրիշները—ոչ։ Թագաւորներն երկնչում էին պատերազմել պապի հետ և ամեն ՝կերպով աշխատում էին իւր կամքը կատարել։

Մի անգամ մի գերմանական թագաւոր պապի հրամանը չըկատարեց, պապը նրան բանադրեց։ Թագաւորն էլ բարկացաւ և կամենում էր զօրքով պապի վրայ գնալ. բայց զօրքն ընդդիմացաւ և չուզեց պատերազմել պապի դէմ։ Թագաւորը տեսնելով, որ բանը վատ է, վճռեց ներողութիւն խնդրել պապից։ Իսկ պապն ասաց. «Յառաջ քան թէ քեզ ներէի, պէտք է որ լինէ մօտ գատ և իբրև ապաշխարող յանցաւոր՝ առջևս խոնարհես»։ Թագաւորը գնաց բոբիկ ոտքերով, գլխաբաց, մի շապկով, մէջքին պարան կապած, և այսպէս երեք օր, երեք գիշեր ներողութիւն խնդրելով կանգնեցաւ պապի պատուհանի տակ, —և միայն չորրորդ օրը պապն արձակեց նրան բանադրանքից։

Վիճակներն և ծուխերը պապը բաժանում էր, ինչպէս և կամենար։ Ամեն մի վիճակ և ծուխ առանձին գին ունէր. մեծի համար առնում էր մեծ դրամ, փոքրի համար—փոքր։ Գալիս էր պապի կամ նրա ձեռնասուն եպիսկոպոսի մօտ մի խեղճ պատէր և ասում էր. «Սրբազան հայր, չքաւոր եմ, չեմ կարող ընտանիքս կերակրել—տուր ինձ մի առաւել մեծ ծուխ»։—«Բայց որ-

քան կրվճարես», հարցնում էր իսկոյն եպիսկոպոսը։—«Աղքատ մարդ եմ, սրբազան. հարիւր մանէթ կրտամ, աւելի չունիմ», ասում էր պատէրը։ Իսկ եպիսկոպոսը. «Միւսն ինձ աւելի խոստացաւ, նա՛ էլ կրստանայ ծուխը»։

Պապի հրամանով մեղքերի քաւութիւնն էլ վաճառվում էր, իբրև մի ապարանք։ Օրինակի համար, եթէ վարդապետի մօտ մի մեղաւոր գար և ասէր. «Այս ինչ բանով մեղանչել եմ, հայր սուրբ, տո՛ւր ինձ թողութիւն», վարդապետը կասէր. «Մեղքիդ համար այսքան պլտի վրճարես»։ Մեղաւորն էլ փողը տալիս էր և ստանում էր վարդապետից մի թուղթ, որի վրայ գրուած էր—«Քաւուած են այս ինչ ծառայի մեղքերը»։ Այնուհետև մեղաւորը հեռանում էր և սկսում էր նորից մարդ խաբել և գողութիւն անել, որովհետև հաւատի էր, թէ կարելի էր միւս անգամ էլ քաւութիւն գնել։

Ամեն մի մեղքի համար առանձին դին էր նշանակուած։ Եկեղեցւոյ կողոպտութեան համար դրուած էր 9 ոսկի, սպանութեան համար՝ 7, կախարդութեան համար՝ 6, հայրասպանութեան և մայրասպանութեան համար՝ չորս-չորս ոսկի։ Փողով կարելի էր բոլոր ապառնի մեղքերի համար առաջուց մի քաւութեան թուղթ գնել։ Այս տեսակ դրերը կոչվում էին ինդուլգենցիա. դրանց վաճառումից դուցացած արդիւնքի կէսը առաքվում էր պապին, կէսն էլ մնում էր վարդապետների մօտ։

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄՆԱՍ ԲԱՐԵԻ

(Տ է ն ի ս ը ն ի ց)

Աղպաջուն առուակ, սահիր դէպի ծով,
Հանդարտ գլորիր ալիքըդ վճիտ.
Էլ այցելութեան խռոված հոգով
Ես չեմ գալ երբէք սիրուն ափերիդ:

Սահիր մարգերով և հովիտներով,
Դարձիր, սիրելի, յորդառատ մի գետ.
Էլ չես տեսնելու ինձ յուզուած սրտով,—
Ո՜հ, մնաս բարև, ընկեր իմ, յաւէտ:

Վերադ խոնարհած կողբայ ուռենին,
Կըլսուի այստեղ շրշիւնը բարդու,
Մեղուն կըճախրէ քո կանաչ ափին.
Բայց դու ինձ երբէք էլ չես տեսնելու:

Ոսկի շողերը դարնան արևի
Ալիքներիդ հետ ուրախ կըխաղան,
Լուսինը քեզ հաշտ գուցէ դեռ ժպտի,—
Բայց էլ չես տեսնիլ դու ինձ յաւիտեան:

Յ. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

Մոսկուա. 18 դեկտ. 1887.

ԿՈՅՐԵՐԻ ԵՒ ԽՈՒԼ ՈՒ ՀԱՄՐԵՐԻ

ԿԱՐԵԿԻՑՆԵՐԸ

ըեթէ միաժամանակ աբբատ Լէ-սլէի հետ, Գերմանիայում կենում էր մի մարդ, որ մի և նոյն բաբի նպատակին հասնելու համար գործ դրաւ ոչ սակաւ աշխատանք և եռանդ։

Գերմանական Հաուցշուտց անունով փոքրիկ գիւղում, Վեյսենֆիլս քաղաքի մօտ, Սաալ գետի վրայ, կար մի լաւ շինած գիւղական տուն, որ պատկանում էր Հէյնիկէ գիւղացուն։ Մաքուր ընդարձակ բակ, ամրակուռ շինութիւններ, դեր ընտանի կենդանիներ, բազմաթիւ չաղ հաւեր, բադեր, սագեր և այլն, ցոյց էին տալիս, որ Ծերունի Հէյնիկէն էր ամենահարուստ գիւղացիներից մէկը այդ կողմերում։ Բայց չընայած այդ ամենին՝ բաւական չէր իւր կենցաղից նրա միակ որդին, Սամուէլը, քաջառողջ, զուարթ քսանամեայ երիտասարդը։ Խնդիրն այն է, որ Սամուէլը սէր ունէր գրքերի, ուսման, երաժշտութեան և պատրաստ էր դրանց համար մոռանալ ամեն ինչ աշխարհիս երեսին։ Ծերունի Հէյնիկէի կարծիքով դրանք տղայական փափագներ էին, իսկ նրա որդին պարտաւոր է լինել ամենից առաջ լաւ աշխատաւոր, որ կարողանար պահպանել հայրենական կարողութիւնը, որ ձեռք էր բերուած շատ աշխատութիւնով և զրկանքներ կրելով։ Խիստ Ծերունին խստաբար դէմ էր որդու ինքնակրթութեամբ պարապելուն. նա խլեց նրա ձեռքից ամեն գրքեր, բացի Աստուածաշնչից և աղօթագրքից։

Մեծ դժուարութիւնով Սամուէլը կարողացաւ թոյլ-

տուրթիւն առնել հօրից, որ ջուրթակի դասերը առնէ իւր պապից։ Երիտասարդը ամենայն ոյժով աշխատում էր և ամեն բանի մէջ հնազանդում էր հօրը։ Հէնց մի ժուկ ժամանակ էր գտնում գիւղային աշխատութիւններից հանգչելու համար, նա իսկոյն թաք էր կենում մի թփի կամ մի դէզի ետև և խորասուզվում էր ընթերցանութեան մէջ։

Այդ եղանակով Սամուէլը կեանք էր վարում, մինչև որ դարձաւ քսան և երկու տարեկան. այն ժամանակ մի գեղեցիկ օր, հայրը կանչեց նրան իւր մօտ և յայտնեց որ հասել է ժամանակը նրան պսակելու. թէ հարսնացուն արդէն ընտրուած է իրանց հարևանի աղջիկը։ Հօր այդ վճիռը սարսափեցրեց որդուն և նա պաղատում էր հօրը՝ յետաձգել այդ մտադրութիւնը, ասելով որ ինքը դեռ նախապատրաստուած չէ ընտանեկան կեանքի համար և որ դրացու աղջիկը նրա սրտովը չէ։

Հայրը բարկացաւ, ոչինչ չէր ուզում լսել. նա ասում էր, որ ինչպէս ինքն է ամուսնացել իւր հօր կամքով, այնպէս էլ որդին պիտի ամուսնանայ։ Սամուէլը ուրիշ ելք չըգտնելով այդ դրութիւնից, գիշերով փախաւ Դրէզդէն հռչակաւոր քաղաքը և մտաւ զինուորական ծառայութիւն։ Զօրանոցում ծառայութիւնից ազատ ժամերում նա պարապում էր սովելի հանդով. նա սկսեց սովորել Ֆրանսերէն և լատիներէն լեզուները. այդպիսի ինքնակրթութիւնով նա հասաւ այն աստիճանի զարգացման, որ հնար ունեցաւ սկզբնական գրագիտութեան դասեր տալ մանուկներին. շուտով նա համբաւ ստացաւ ինչպէս լաւ պարապող ուսուցիչ։ Այդ ամենից յետոյ, վերջապէս նա հաշտուեց հօրը հետ, մի քանի ժամանակ նրա մահուանից առաջ և ամուսնացաւ իւր համակրած աղջկայ հետ։

1775 թուին Սամուէլ Հէյնիկէն մօտ ի թիւս այլ երեխաների բերին մի խուլ ու համր մանուկ, որ ընդունակ տղայ էր երևում և շատ հետաքրքրեց ուսուցչին. Հէյնիկէն մինչև այդ ժամանակ ոչինչ հասկացողութիւն չունէր խուլ ու համրերին ուսուցանելու հնարների մասին. ամեն ինչ նա պիտի անէր իւր սեպհական խելքով. այսու ամենայնիւ մանուկը նրա ձեռքի տակ շուտով զարմանալի յառաջադիմութիւն արաւ, որ հրաշք էր համարվում տեսնողների համար։ Գրելը շատ հեշտ էր յաջողվում նրան, բայց Հէյնիկէն աւելի

ուրախ էր նրա ցոյց տուած յառաջադիմութիւնովը թուաբանութեան մէջ. այդ յոյս էր տալիս, որ մանուկի մտաւոր զարգացումը շատ առաջ կարելի էր տանել։ Սակայն նա դրանով չէր բաւականանում, այլ կամենում էր, ինչ որ էլ չլինի, որ իւր սանը ոչ միայն միմիկայով—շարժուածքներով—կամ գրով բացատրէ իւր միտքը, այլ և բերանացի։



Ահա այդ էր գլխաւոր տարբերութիւնը Հէյնիկէ աշխատութեան Աբբատ Լէպէի դպրոցներից։ Եւ յիրաւի, մի քանի ժամանակից յետոյ երեխան դիտելով ուրիշների բերանին բառերը արտասանած՝ միջոցին, ինքն ևս դիտելով ըմբռնում էր նրանց արտասանած ձայները և նոյն ձևով բա-

ական որոշ կերպով ձայները և բառերը էր արտասանում, մանաւանդ լաւ յաջողվում էին ձայնաւոր տառերը. նա համարեա կարողացաւ վերջապէս բոլոր տառերը հնչեցնել տալ նրան։

Այս զբաղմունքներով այն աստիճան գրաւեցին Հէյնիկէի ուշք ու միտքը, որ նա թողեց զինուորական ծառայութիւնը և անձնատուր եղաւ ուսուցչական ասպարիզին։

Սակայն յանկարծ բացվում է պատերազմ, նա պարտական էր իսկոյն ամեն բան թողնել և գնալ կռուի։

Եօթնամեայ պատերազմը շատ վատաբախտ եղաւ սաքսօնցիների համար, որոնց զօրքի շարքումն էր և Հէյնիկէն։

Այդ հերիք չէր, Հէյնիկէն գերի բռնուեցաւ և զինուած նստեց բերդի մէջ։ Հէյնիկէն ամեն հնարք գործ դրաւ և մի կերպ փախաւ բերդից և թաքնուեցաւ իւր կնոջ մօտ։ Երբ զինուորական հետախուզութիւնները նրան փնտրելու համար մի քիչ հանդարտեցին, նա իւր կնոջ հետ խոյս տուաւ գնաց Ի ե ն քաղաքը, որ ունէր հռչակաւոր համալսարան։ Այդտեղ նա յաճախում էր համալսարան, դասեր լսելու, մի և նոյն ժամանակ դասեր էր տալիս օրական ապրուստ հայթայթելու համար, որին աշխատակցում էր կինը՝ կար անելով։

Զընայելով որ Հէյնիկէի գործերը այդտեղ յաջող էին, բայց նրա գլխին գալիք փորձութիւնները երևի դեռ չէին վերջացել. վասն զի պրուսացի հետախուզիչները գտան Հէյնիկէի հետքը և նա մազապուրծ փախուստ տուաւ Համբուրգ քաղաքը։ Այս քաղաքում բախտը նրան ժպտաց, նա կրկին վերանորոգեց իւր աշխատութիւնները, ունեցաւ մի ընտիր շրջան բանիմաց ծանօթների, որոնք համակրում և քաջալերում էին նրան, և որոնց միջնորդութիւնով նա նշանակուեց ուսուցիչ Էլպենդորֆ գիւղում, որ Համբուրգի շրջականերումն էր։

Շուտով նա դարձեալ ունեցաւ մի խուլ ու համր աշակերտ, որ երկու տարուց յետոյ միւս մանուկների հետ հաւասարապէս քննութիւն տուաւ ոչ միայն գրաւոր կերպով, այլև բերանացի։ Այս հանգամանքը մեծ աղմուկ հանեց և նրա թշնամի գիւղի քահանան սկսեց քարոզել, որ Հէյնիկէն աստուածամարտ է, Լայլն, սակայն, ի հարկէ, նրան լսող չեղաւ։ Համբաւը այս նոր բարի և աստուածահաճոյ գործի մասին շուտով ամեն կողմ տարածուեց և շատ ուսումնական ու

բարձրաստիճան մարդիկ գալիս էին նրան այցի և շնորհակալութիւն յայտնում։ Հէյնիկէի մօտ այնքան խուլ ու համր հաւաքուեցան, որ նրա դպրոցը եղաւ յատկապէս կարծես դըրանց համար բացուած։

Ցասը տարի շարունակ նա այդ կերպով քրտնաթոր աշխատեց։

Մի անգամ դրա մօտ եկաւ մի սաքսոնցի սպայ այցելութեան և իմանալով որ Հէյնիկէն իւր հայրենակիցն է և լսելով նրա տարագրութեան վշտալից պատմութիւնը և նրա ջերմ ցանկութիւնը վերադառնալ հայրենիք և նրա օգտին գործել, խոստացաւ փութով միջնորդել՝ նրան թոյլ տալու համար վերաբնակիլ հայրենիք։ Ցիրաւի շուտով Սաքսոնիայի կառավարութիւնը լուծում տուաւ նրան գալ բնակիլ Լէյպ-

ցեկ, ուր նա առաջին անգամ ապրիլի 13-ին, 1778 թվին բացաւ խուլ ու համրերի համար դպրոց։ Սաքսոնիայի թագաւորը արքունի ծախսով ապահովեց նրա դպրոցի գոյութիւնը։

Տասներկու տարի էլ Հէյնիկէն գործեց Լայպցիկում և կնքեց իւր բազմարդիւն մահկանացուն ապրիլի 30-ին 1790 թվին։ Նրա ձգած բարի սերմը աճեց և բազմացաւ. այժմ չըկայ որ և է շատ ու քիչ մեծ եւրոպական քաղաք, ուր չը լինի խուլ ու համրերին յատկացեալ դպրոց։

Ծանօթացնելով խուլ ու համրերի բարերարների հետ մենք հետևաբար կըգանք հարցնելու—թէ ով եղաւ առաջին հիմք գցողը կոյրերի խղճալի վիճակը բարւոքելու համար. ով էր որ հնար տուաւ մշտնջենական խաւարի մէջ խորասուզուած մանուկներին կարդալ, գրել, զանազան արհեստներ սովորել և իրանց ձեռքի աշխատութիւնով հայթայթել մի կտոր հաց։

Մինչև տասն և ութ դարը մենք գրեթէ ոչ մի տեղ չենք հանդիպում լուրջ միջոցների, որ ձեռնակուած լինէին կոյերի դրութիւնը թեթևացնելու. միայն 1771 թվին, մի պատահական հանգամանք ծնեց առաջին անգամ այդ միտքը մի մարդի մէջ, որին վիճակուած էր լինել կոյրերի բարի հրեշտակը։

Այդ տարին մի մառախուղոտ օր, Փարիզի փողոցներով գնում էր մի երիտասարդ. յանկարծ նրա դէմն ելաւ մի խաժամուժ ամբոխ, որ մի գլխատան առաջ հաւաքուած լսում էր մի խայտառակ երաժշտութիւն. երաժիշտների խումբը կազմուած էր տասը կոյր անձերից. դրանցից մէկը շրջում էր ամբոխի մէջ և փող էր հաւաքում. զարմանալին այն էր որ նա շշալիելով ճանաչում էր բոլոր ձգած դրամների որքանութիւնը։ Երիտասարդը, որ դիտում էր այս խղճալի տեսարանը, էր Վալենտին Գէյ-Թարգման պաշտօնեայ Ծովային նախարարութեան, անդամ Փարիզի հնագիտական ընկերութեան։ Վալենտինը այդ դէպքից յետոյ մտմտաց ինքն իրան և ասաց, եթէ դրամի վրայի դուրս պրծած տառերը կոյրը ճանաչում է, ուրեմն կարելի է դուրս պրծած տառերով կոյրերին կարդալ սովորեցնել և նպաստել նրանց մտաւոր զարգացմանը։ Երկար ժամանակ մտածելով այդ մասին, նա վերջապէս սկսեց փորձեր անել։ Ձարեց մի կոյր աշակերտ, որի

հետ սկսեց պարապել իւր գլխում կազմած ծրագրի համեմատ. կարճ միջոցում աշակերտի արած յառաջադիմութիւնը գերազանցեց իւր սպասածը, այնպէս որ նա վճռեց մի զեկուցում անել այդ մասին գիտութեանց Հեմարանում։ Այդ զեկուցումը այն աստիճան հետաքրքրութիւն շարժեց, որ ազգային լուսաւորութեան նախարարութիւնը հարցաքննութիւն կատարեց, որի հետևանքը ամենափառաւոր կերպով ապացուցեց Վալենտինի ոկսած գործի մեծութիւնը և մարդկութեան համար ունեցած մեծ նշանակութիւնը։ Շուտով մի բարեգործական ընկերութեան միջոցով բացուեցաւ առաջին դպրոցը կոյրերի համար 14 սանիկով։ 1785 թուին նշանակուած էր հրապարակական քննութիւն ի ներկայութեան ազգային Հեմարանի անդամների։ Քննութիւնների արդիւնքը ամենքին պատճառեց մեծ հիացում և ցնծութիւն։

Դրանից յետոյ արդէն հիմնուեցաւ Փարիզում մի ապաստանարան, ուր յաճախում էին 140 սանիկ. նրանց սովորեցնում էին գրագիտութիւն դուրս ցցուած տառերով. երանք կոյրերը հէնց սովորել էին պատրաստել կարդալու այդպիսի գրքեր և ձայնագրութեան մատեաններ. նոյն կերպով սովորում էին թուաբանութիւն, աշխարհագրութիւն, ուռուցիկ թուանշաններով. քարտէզները ևս շինած էին կորնթիկ սաբերով ևայլն։ Բացի դրանից կոյրերը սովորում էին գործել թելերից կամ ճիպոտներից զանազան երեղէններ, որոնց վաճառումից գոյացած դրամը ծածկում էր ապաստանարանի ծախսի մեծ մասը։ Շուտով այդօրինակ հիմնարկութիւնները հիմնուեցան Եւրոպայի ամեն տէրութիւններում, որոնց ամեն մինը անշուշտ մի պանծալի արձան է մարդկութեան մեծ բարերար Վալենտին Գէյին։

ԱՄԲՐՈՍ

ՅՈՒՍԱՀԱՏ

ՂԱՐԻԲ ՀԻԻԱՆԴ

Թող ինձ, Տէր իմ, Տէր-Բարերար,
Բաւ է տանջուիմ ես չարաչար.
Բաւ է որքան ցաւեր ու վիշտ,
Սուգ, տրտմութիւն կրեմ ես միշտ.

Հեռու ծնող—սիրելիքից,
Եւ անուշիկ Հայրենիքից.
Այստեղ ընկած օտար, անտէր,
Որպէս թռչուն մի բնաւէր . . .

Շրկայ մէկը ինձ ցաւակից,
Որ լինէր սրտով կարեկից. . .
Չունիմ այստեղ՝ դէթ մի ընկեր,
Որով ցրուէր այս իմ վշտեր։

Փակուած հիւանդ մի նկուղում,
Նստած սև օրերս եմ ողբում.
Բայց ինձ ոչ ոք լսող չրկայ,
Ո՛չ ոք դուռս բացող չրկայ . . .

Էլ յոյս չունիմ, Տէր Բարերար,
Դու ես յոյս, Դու միենուճար,
Կամ հոգիս ա՛ռ,—լաւ է կեանքից,
Կամ ազատիր այս տանջանքից...

ՅԱԿ. ՂԱԶԱՐԵԱՆՑ

ՄԵՆԱՔԷՄ ԳԱՄԱՂԱՅՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Վ. Կօրօլէնկոյից)

Այսպէս բազմանում էր տառապանքը, բայց չափը դեռ չէր լրացել։

Որովհետև Ալբինոսի տեղ նշանակուած Գեսսիոս Ֆլորը ցոյց տուեց որ իւր համեմատութեամբ Ալբինոսն էլ կարող էր հեզարարոյ կուսակալ համարուիլ։

Մինչդեռ Ալբինոսը իւր չարութիւնների շատը կատարում էր թաքուն ու ծածկելով, Ֆլորը պարծենում էր իւր ժողովրդին հասցրած զրկանքներովը, նմանելով Ներոնին։

Ողորմածութեան գործերում նա տմարդի էր, իսկ նշաւակութեան գործերը անպատիժ թողնելով, ինքը այդ գործերի առաջին և ամենաանամօթ սկզբնապատճառը և հովանաւորն էր հանդիսանում։

Այսպէս աճում էր բռնութեան ծառը թուլութեան հողի վրայ և գոռոզութիւնը խոնարհութեան հողի վրայ։ Եւ ժողովուրդը յոյս ու ելք չունէր, որովհետև արդարադատութեան աղբիւրները խափանուած էին։

*
* *

Բաղարջակերաց տօնին Երուսաղէմ եկաւ Սորոց կուսակալ Կեստիոս գալլիացին, որ հզօր էր Հռովմէացոց մէջ։ Այն ժամանակ հրէաների բոլոր բազմութիւնը, կառավար-

չին շրջապատած, աղաղակով (ողբալով) դանդատվում էին Ֆլորի հասցրած նեղութիւնների վրայ և արդարադատութիւն ու պաշտպանութիւն էին խնդրում։ Եւ Կեստիոսը կանգնած էր բարձրութեան վրայ ժողովրդի մէջ, որ ձեռները մեկնում էր դէպի նա, և մտածում էր։

Նա դաժան զինուոր էր, և չէր վախում մահից, բայց իւր տէրերի բարկութիւնից վախենում էր։ Նրա սրտի բաբախումը չէր արագանում կռուի մէջ, բայց անսիրելութեան աչքի առաջ դողում էր նրա սիրտը։ Որովհետև այդպէս են բռնութեան ծառայողների սրտերը։

Եւ Կեստիոսը միտք արեց. եթէ ես սրանց պաշտպանութիւն անեմ, կարող եմ Ներոնի աչքից ընկնել, որովհետև Ֆլորը այժ ունի արքունի դրանը, իսկ Ներոնը ինքն էլ է արիւնարուշտ։ Իսկ եթէ չպաշտպանեմ, ժողովրդի համբերութիւնը չափից անց կրկենայ և նա կապստամբուի։ Այն ժամանակ արիւնհեղութիւն կըլինի, և ես ստիպուած կըլինիմ իմ լեգէոնները հանել նրանց դէմ։ Լաւը այս է։

Եւ մինչդեռ նա այդպէս մտածում էր, ժողովուրդը ձեռները մեկնում էր դէպի նա, իսկ Ֆլորը նրա կողքին կանգնած աշկարա ծիծաղում էր ժողովրդի աղաղակի և յուսոյ վրայ։ Որովհետև գիտէր որ արդարադատութիւն չեն գտնի։

Հանդարտացնելով հրէաների աղաղակները, Կեստիոսը կեղծաւորութեամբ ասաց նրանց, որ միամիտ լինին, որովհետև նա գիտէ որ Ֆլորը պիտի ողորմի ժողովրդին։

Իսկ արդարադատութեան մասին ոչ մի խօսք չասած հեռացաւ, և Ֆլորը գնաց նրա հետ որ ուղեկցէ մինչև իսկ Կեսարիա, իւր սէրը ցոյց տալու համար կուսակալին, որ պահպանեց իւր բարեկամութիւնը նրա հետ։

Սրանից յետոյ ուղարկեց Երուսաղէմ իւր զինուորներին և հրամայեց, որ տասնեօթ տաղանդ վեր առնեն տա-

ճարի գանձիցը, որ պահվում էր Անտոնիոսի ասուած աշտարակումը։

Այսպէս Ֆլորը ձեռը որբութիւնի մխեց, ձգտելով գըլխովին կողոպտել տաճարը և բոլոր ժողովրդին։

* * *

Հռովմայեցոց մէջ կար Աւլոս Կատուլլոս անունով մի Հազարապետ։ Սա ալևոր զինուոր էր, յիշում էր արի և բարեմիտ Հրամանատարների ժամանակները... Ֆլորի միտքը իմանալով, նա ձայն բարձրացրեց լեգէոնների առաջ և ասաց.

—Յիշում ես արդեօք, Գեսսիոս Ֆլոր, ինչու ես դու այս աշխարհը ուղարկուած։ Նրա համար արդեօք որ նեղես ժողովրդին և ինքդ անչափ հարստանաս, թէ, ընդհակառակը—որ իմաստուն կառավարութեամբ պահպանես կայսերութեան միութիւնը։ Իսկ երբ նեղուած ժողովուրդը ապստամբուի, և նրանից յետոյ ապստամբուին ուրիշները,—ինչ պատասխան կըտաս Ծերակոյտի առաջ։

Բայց Ֆլորը, արբած շահասիրութիւնից ու արհամարանքից դէպի Հրէաները, ծիծաղում էր Աւլոս Կատուլլոսի խօսքերի վրայ և ասում էր.

—Ես ճանաչում եմ Հրէաներին։ Այս ողորմելի ազգը պիտի յանդգնի մեր՝ քաջ Հռովմայեցիներիս դէմ։ Ո՛չ, որանք չեն կարող դիմադրել Հռովմէական պետութիւնը. իսկ մենք քաջերս Հեշտութեամբ աւար ձեռք կըբերենք։ Հրէաները վախկոտ են և անմիաբան ձեռնարկութիւնների մէջ։ Եթէ ապստամբուին էլ, Հեշտ յաղթութեան հետ մենք մեծ շահ կըստանանք և արդէն առանց երկիւղ ունելու կայսրից ու Ծերակոյտից։ Իսկ եթէ ամեն բանի համբերեն մեծ խոնարհութեամբ, մենք առանց դժուարութեան ձեռք կըձգենք տաճարի գանձը և հարստացած հայրենիք կըդառնանք, նոր լեգէոնների համար տեղ բաց անելով Հեշտութեամբ հարստանալու։ Որովհետև շահը վի-

ճակուած է քաջերին, իսկ խոնարհներին վիճակուած է ուրիշների համար աշխատել... Այսպէս են մտածում բոլոր քաջերը, իսկ դու, Կատուլլոս, փոքրոգի ես։ Եւ այս պատճառով դու արժանի չես մարդկանց հրամայելու, այլ պէտք է հասարակ զինուորների շարքումը կանգնես, իսկ ուրիշները կառաջնորդեն լեգէոնները դէպի հարստութիւն։

Այն ժամանակ հռովմայեցոց բազմութեան մէջ բարձրաձայն աղաղակներ լսուեցան։

Եւ թէպէտ կային Կատուլլոսին սիրող և նրա համախոհ զինուորներ, բայց այդպէսները քիչ էին, և սրա համար չէին համարձակում հակառակել։ Եւ Կատուլլոսը հանեց հրամանատարի զրահները և հասարակ զինուորների շարքումը կանգնեց։

***

Իսկ Երուսաղէմում ժողովրդի մէջ նոյնպէս մեծ շփոթ ընկաւ։ Անհամաձայն լինելով միմեանց հետ, մարդիկ շատ հակառակում ու վիճում էին։ Ոմանք ձայները բարձրացնելով ասում էին.

—Մինչև ե՞րբ պիտի դիմանանք մարդկանց բռնութեանը և սրբութեան անարգանքին։ Թէ՞ չէք տեսնում, ո՞ւր է տանում Փիլատոսին շահամոլութիւնը և չար սիրտը... Նա կանգ չի առնիլ, մինչև չբյուրեցնէ սրբութիւնը, իսկ յուրեցնելուց յետոյ նորանոր բռնութիւնների դիմելու ցանկութիւնը կբյուրանայ։ Որովհետև ինչպէս լեգէոնները կանգնած են դրօշի շուրջը, այնպէս մեր ազգը՝ սրբութեան շուրջը։ Եւ եթէ թշնամին դրօշը յափշտակէ, լեգէոնը յաղթվում է և թշնամին ջարդում է փախչողներին հեշտութեամբ։ Այնպէս էլ Փիլատը կասէ ինքն իրան. եթէ չկարողացաւ այս ազգը պաշտպանել իւր սրբութիւնը, էլ ի՞նչ բանի պիտի դիմադրէ այսուհետև և ի՞նչ պիտի չկարողանամ նրան անել։ Մի՞թէ մենք այս ենք ցան-

կանում։ Մինթէ ցանկանում ենք որ լեգէոնների զինուորները՝ սուրով ծանրաբեռնուած, Հայրենիք վերադառնալով, ասեն իրանց ընկերներին. «Գնացէ՛ք Հրէաստան, որովհետև այնտեղ ժողովուրդը փոքրոգի է, և զինուորին վտանգ չէ սպառնում կռուի մէջ, այլ միայն զուարճութիւններ են սպասում. Հրէաները չեն պաշտպանում միմեանց, այլ Հայրերը խոնարհութեամբ բերում են իրանց դեռահաս աղջիկներին զինուորների առագաստը»։

Եւ այսպէս խօսելով վառում էին ժողովրդի մէջ ապըստամբութեան զգացմունքներ և շատերն ասում էին. Աւելի լաւ է մեռնել Անտոնիոսի շէմքումը սրբութեան և պատուի պաշտպանութեան Համար։ Ֆլորը սուր է կամենում, սուր կունենայ։ Մենք կայսրից արդարադատութիւն չենք տեսնում, թող ուրեմն մարտը կառավարող Աստուածը դատէ մեզ Ֆլորի Հետ»։

Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դլեսանդէլից)

ԱԶՔ ԵՒ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ.

Այստեղ զետեղուած նկարներից № 1-ը է համակենտրոնական մի շրջանակ, եթէ այդ նկարը մենք սկսենք պտտել հէնց մեր ձեռքի միջոցով, կընկատենք որ, համակեդրոնական այդ շրջանակն էլ կը թուայ թէ նոյն ուղղութիւնով պտտում է իւր կեդրոնի կամ առանցքի շուրջը: № 2 նկարը ընդհակառակն, եթէ սկսենք պտտել տալ, մեզ նոյնպէս կրթուայ թէ նրանք էս պտոյտ են գալիս ինքնուրոյնաբար, սակայն մեր պրտրտած թղթի կամ գրքի հակառակ ուղղութիւնով. այդ վոճը հէնց արէք «Աղբիւրի» վրայ:

(№ 1)

(№ 2)

Էլի դարձեալ կրկին տեսէք թէ ինչեր են նկատած աչքի մասին. եթէ յառած աչքերով երկար ժամանակ նայէք ջրվէժին և յանկարծակի ձեր հայացքը դարձնէք շրջակայ ժայռերին, ձեզ այնպէս կերևայ թէ, ժայռերը շարժողութեան մէջ են, միայն՝ ներքևից վերև:

Երկաթուղով ճանապարհորդելիս, եթէ գնացքի արագ ընթացքի ժամանակ նայէք ետքը մնացող դիւղի վրայ, դուք կընկատէք որ, հեռացող առարկաները հետզհետէ մանրանում են նրանց վրայ յառած աչքերով նայող տեսութեան համար. այդ դրութիւնում եթէ յանկարծ դարձնէք ձեր աչքերը վագոնի ներսը, ձեզ այնպէս կերևայ թէ այնտեղի առարկաները և մարդիկը ընդհակառակը մօտենում են և խոշորանում:

Տեսողութեան ընդունած տպաւորութեան երկարատևութեան հիման վրայ հիմնուած է հետևեալ փորձը. եթէ երկար նայէք № 3 սպիտակ նկարի ներսի սև բծին, ապա աչքներդ դարձնէք առաստաղին, մի քանի վայրկեանից այնտեղ կընկատէք նոյն կերպարանքը ընդհակառակը սև գոյնով և սպիտակ բիծով: Այդ փորձը աւելի յաջող է դուրս գալիս՝ եթէ պայծառ լուսաւորուած սենեակում կատարուի:

(№ 3)

Նոյնպէս բազմաթիւ տեսողական պատրանքներ կարելի է յառաջացնել հայելիների միջոցով. այն հայելիները, որոնք ունին կիսաբոլորակ կամ դուրս պրծած մակերևոյթ, շատ փոփոխում են առարկայի կերպարանքը, կարելի է գործ ածել և սիւնակաձև շինած հայելի. օրինակ նայեցէք № 4 նկարի վրայ, որ ցոյց է տրուած թէ ինչպէս մի անճաւնի պատկեր՝ կատարեալ ձեռնաձուի կերպարանք է երևցնում սիւնակ-հայելիի մէջ:

Այդ տեսակ խաղերից ամենից նշանաւորն է «կ ը տ ր ա ծ դ լ ո ւ խ ը, որ խ օ ս ո ւ մ է», տես պատկեր № 5 որ իւր ժամանակին մեծ աղմուկ հանեց միամիտ ամբոխի մէջ: Հանդիսականին այնպէս է թուում թէ սեղանի

տակը դատարկ է. որ դա մի եռոտանի սեղան է, վրան մի պնակ, մէջը դրած է մի «կտրած» դլուխ, որ խոսում է: Բոլոր գաղտնիքը նրանումն է, որ մի քիչ թեք կերպով սեղանի ոտերի մէջ դրած է երկու հայելի դէպի աջ և ձախ պատը. այդ երկու հայելիների մէջ տեղն է տեղաւորուած մարդը. եթէ մէկը պատահմամբ մի քար ձգէր սեղանի ոտերի տակ, հայելիները կըփշրուէին



(№ 4)

և գաղտնիքը մերկացած կըներկայանար հանդիսականներին:

Այսքանով բաւականացէք, սիրելի ընթերցողներ, ուշքի մասին, դուք ունիք դեռ ուրիշ շատ առիթներ հարուստ, օգտակար և հետաքրքրական տեղեկութիւններ առնելու: Սրանով վերջացաւ այն քաղուածքը, որ անում էինք մի տարի շարունակ Պիոանդէի բազմաշխատ հեղինակի դրքից:

Այս զրուցատրութիւններում մենք ի հարկէ յաջորդաբար յայտնի խնդիրներ չունէինք դրած բնական պատ-

րութիւնից. որանք հատընտիր տեղեկութիւններ էին, ո-մոնք կընպաստեն առանձին սիրով և եռանդով սկսել և հետևել բնական պատմութեան դասերին դպրոցում: Պարտք կայ ամեն աշակերտի վրայ, որ որչափ և իցէ կարդացել է և օգտուել է «ընտանեկան զրոյցներից», յորդոր



(Գ. Բ.)

լինի իւր նոր սկսող ընկերներին և մատնացոյց անի նը-նրանց «Աղբիւրի» այն համարների վրայ, որոնց մէջ արպագրուել են մեր այս նախապատրաստական յօդուածնե-րը բնական գիտութեան համար:

ԽԱՉԻԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սառած լրագիր։—Պարմա քաղաքի «Պրեզինտո» լրագիրը տպել է այս օրերս հոշոտ տառերով հետեւեալ աղրը լրագրի առաջին երեսում. «Պատիկ ցրտերի պատճառով մեր լրագիրը վաղը լոյս չի տեսնիլ. եթէ արտաքոյ կարգի լուրեր լինին, մենք կը հրատարակենք առանձին թերթ ստիպողական հարկի պատճառով»։

—

Զբօրհնէնք երեկոյին ընթրիք ծերունիների համար։—Անգլիական Էյլսֆոտեր քաղաքում, հաղորդում են լրագիրները, Կուպեր տոհմանունով ընտանիքը առատութիւն ունի Քրիստոսի Ծննդեան նախընթաց երեկոյին ընթրիքի հրաւիրել քաղաքի այն բոլոր ծերունիներին, որոնց տարիքը 70-ից վեր է։ Այս տարուայ այդ միջոցին Կուպերի ընտանիքում մասնակցում էին 2050 ծերունիներ, որոնք ամենքն էլ ստացան բարի տանտէրից ընծաներ եւ նշանակ ի յիշատակ Վիկտորիա թագուհու յիսնամեակի։

Անցեալ տարուայ ընթրիքին մասնակցող ծերունիներից տարուայ ընթացքում վախճանուել էին 344 անձ։

—

Գաւառական տպարաններ։—Բացի Թիֆլիսից կան տպարաններ եւ մեր միւս գաւառական քաղաքներում. տպարաններից ամենից նշանաւորն է Շուշի քաղաքինը. այդտեղ կայ երեք արդատիպ մեքենայ եւ վեց ծեռքի մամուլ. Հայերէն լեզուով ամենից շատ գրքեր են լոյս տեսնում Շուշի։ Շուշիում տպարանական գործը գոյութիւն ունի 1830 թուականից։

—

Թէյի աւելացուցը Չինաստանում.—Լրագիրները հաղորդում են, որ Թէյի արտահանութիւնը այժմ ընկած է Չինաստանում, վասն-զի չինացիք, ոչ կանոնաւոր չորացնել գիտեն եւ ոչ արկղներում պիրկ ամրացնել, այնպէս որ դրանց Թէյի արօմատը իսպառ կորչում է ճանապարհին։ Ընդհակառակը օր օրի վրայ յառաջադիմում է Արեւելեան Հընդկաստանի եւ Ցէյլօն կղզու Թէյը, որ կարգին չորացնվում է եւ կատարելագործուած եղանակով դարսուելով յարմար արկղներում, շատ առաւել գերազանց է չինականից։

—

Լօնդօնի մեծութիւնը.—Ներկայումս Լօնդօնը բռնում է 1200 քառակուսի վերստ տարածութիւն. իւրաքանչիւր տարի բոպէում այնտեղ ծնւում է մի հոգի. իւրաքանչիւր վեց բոպէում այնտեղ մեռնում է մէկը. իւրաքանչիւր օր 205 մարդ է աւելանում. իսկ ամեն տարի 75,000 մարդ։ Լօնդօնի փողոցների երկարութիւնն է 10,500 վերստ. ամեն տարի աւելանում է 45 վերստ երկարութիւնով փողոցներ եւ 9000 տուն. ամեն օր Լօնդօնի նաւահանգստում կանգնած է լինում 1000 նաւ։

—

ՄԵԾ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Ինչպէս անցեալ անգամ ևս յիշած էինք, այս տարուայ յունուարի 1-ին կատարուեց աշխարհախուռմբ հանդէսով Լևոն ԺԳ պապի յիսնամեակը այնպիսի փառաւոր շքեղութեամբ, որի նման ոչ տեսնուած և ոչ լսուած է երկրագնդիս ամենահզօր աշխարհակալների մայրաքաղաքներում: Այդ մեծ տօնախմբութեանը մասնակցեցին ոչ միայն կաթոլիկ քրիստոնեաները, այլ և միւս դաւանութիւնների պետերը, նոյն իսկ մահմեդական և հեթանոս ցեղերի թագաւորները և իշխանները. դրանք ամենքը իրանց յատուկ դեսպանութիւններով ներկայացրին Նորին Սրբութեան իրանց շնորհաւորանքը և մեծագին, ճարտարարուեստ ընծաները:

Լևոն ԺԳ եօթանասուն եօթը տարեկան է. 27 տարեկան հասակում ձեռնադրուեց քահանայ. ընտրուեց պապ 1878-ին. իւր նախկին անունն էր Դօն-Յովակիմ-Պէկչի: Լևոն ԺԳ յայտնի է իւր լրջութեամբ, ունի մեծանձնական բնաւորութիւն, մեղմական հաստատամտութիւն. սա միշտ աշխատում էր իւր անձի վրայ փայլեցնել իւր բարձր կրօնական աստիճանին պատշաճ առաքինութիւններ, բայց դարձեալ իւր գործելու կէտ-նպատակին էր վերադարձնել իւր աշխարհական իշխանութիւնը, որ Աւետարանի բուն հոգոյն հակառակ է, վասն զի մի կրօնաւոր պիտի լինի միայն հոգևոր հովիւ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջար. Բ. Մ.

Եօթը տառից երեք վանկ եմ.
Վեց զատ բառեր իմ մէջ ունեմ.
Առաջի երեք տառը թէ առնես,
Մի ծառատունկ տեղ կըգտնես.
Իսկ եթէ կարդաս վերջին չորս տառ,
Վատ մարդկանց արժան է կասես.
Վերջին վանկը թէ ձախ կարդաս,
Հրամայական բայ կունենաս.
Իսկ թէ նոյն վանկի ձայնաւորն
Առաջ դնես, այնպէս կարդաս,
Յորեն ցանելու տեղ կունենաս.
Եթէ սկզբից բաց թողնես
Երեք տառը դու չըկարդաս,
Վերջին տառն էլ չըհնչես,
Մի Նահապետ կըմտաբերես.
Բայց թէ ամբողջը դու կարդաս,
Մեծ ցեղի նախահայր կըլիշես։
Դէհ, սիրելիս թէ որ գտնես,
Կասեմ որ դու հմուտ, քաջ ես։

Մուրթը պատուհան
Մէջն աւետարան։

ՐԵԲՈՒՍ

Առաջ. Արտաշէս Ձիսեանց.



Այս բեբուսի ԱՌԱՋԻՆ վճռողը կըստանայ 10,000 հատ ՓՈՍՏԻ ՄԱՐԿԱՆԵՐ զանազան երկիրների։

ՇԱԽՄԱՏ

Ով որ սկսում է շախմատ խաղալ սովորել, նա պիտի հաստատ կերպով սովորէ շախմատի տախտակի քառակուսիների դրութիւնը, նշանակութիւնը և անուանակոչութիւնը, ինչպէս նշանակուած է այս աղիւսակի վերայ, որին եթէ ուշադրութիւն դարձնուի, առանց որ և է դժուարութեան կարելի է ուսումնասիրել։

8	ա8	բ8	գ8	դ8	ե8	զ8	է8	ը8
7	ա7	բ7	գ7	դ7	ե7	զ7	է7	ը7
6	ա6	բ6	գ6	դ6	ե6	զ6	է6	ը6
5	ա5	բ5	գ5	դ5	ե5	զ5	է5	ը5
4	ա4	բ4	գ4	դ4	ե4	զ4	է4	ը4
3	ա3	բ3	գ3	դ3	ե3	զ3	է3	ը3
2	ա2	բ2	գ2	դ2	ե2	զ2	է2	ը2
1	ա1	բ1	գ1	դ1	ե1	զ1	է1	ը1
	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը

Այս քառակուսիները վերից վար նշանակուած են այբուբենով, իսկ ձախից աջ ուղղութեամբ թուահամարներով 1—8. այդպիսով իւրաքանչիւր քառակուսին ունի իրան միայն յատուկ տառի և թուահամարի նշանակ. նոտր տառերով տպած նշանակները սև քառակուսիներինն են։

Շախմատի տախտակը այնպէս է դրվում երկու խաղացողների մէջ, որ իւրաքանչիւրի աջ կողմից՝ անկիւնի քառակուսին լինի սպիտակը։

Բոլոր ֆիգուրները բաժանվում են երկու կարգի, որոնց ընդհանուր անունն է զինուորներ և սպաներ. սպաները մի քանի տեսակ են, որոնց անունները չիշել ենք անցեալ անգամ: Արդ, ֆիգուրների այդ երկու խումբը պէտք է դասաւորել այսպէս. իւրաքանչիւր խաղացող դնում է իրան մերձաւոր առաջին հորիզոնական շերտի քառակուսիների վրայ սպանների խումբը, իսկ երկրորդ հորիզոնական շարքի վրայ պէտք է դասաւորել զինուորներին: Երկու անկիւնային քառակուսիներում պէտք է դնել երկու աշտարակները, սրանց կողքին երկու ձիերը, որոնց մօտ էլ դնում են երկու սպաներին (կամ փղերին): Մնացած երկու քառակուսիները պատկանում են թագուհուն և թագաւորին. միայն պէտք է ի նկատի ունենալ, որ սև թագուհին պիտի դրուի սև քառակուսու վրայ, իսկ սպիտակ թագուհին սպիտակ քառակուսու վրայ: Այդ նկարագրած դասաւորութիւնը կարող է քուսումնասիրել այս պատկերի վրայ:



(Կշարունակուի)

№ 1-ի ԽՆԴՐԻ ԵՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ.

Խնդրի բացատրութիւնը

Ա. Շոգեկառքը վերցնելով իրան հետ երկու վագոն մըտնում է անցքի մէջ, Բ-ն առաջ գնալով և կպցնում է իրան յետև Ա-ի ունեցած երկու վագոն և յետ է քաշվում. յետոյ դուրս է գալիս Ա-ն և կրկին վերցնելով մնացած 18 վագոնից երկուսը մտնում է անցքի մէջ, Բ-ն կրկին առաջ է գընում և վերցնում է կրկին այն երկու վագոնն էլ իրան յետևից այսպէս շարունակ մինչև որ Ա-ի բոլորը 20 վագոնը կըպչի Բ-ի վագոնների յետև։ Յետոյ Ա-ն դուրս է գալիս անցքից և վերցնելով իւր 20 վագոնը գնում է նոյն ուղղութիւնով, ինչ ուղղութիւնով որ առաջ էր գնում և ի հարկէ Բ-ն էլ կըրկին իրան ուղղութիւնով։

Հանելուկների բացատրութիւնը

1.

Մագերն են ջրչան.
Ճակատն է մէյդան.
Սոքա երկուքը
Մէկ-մէկու տակ կան.
Որոնցից ներքև՝
Քիթն է ակներև
Որ զունդի նման

Դիրք ունի և ձև։
Բերանն է մարգ.
Ատամն՝ ուրագ.
Քթի տակ բերան,
Բերնի մէջ ատամ՝
Են շարան-շարան։

—

2.

Գիտեցած բանդ՝ որ միավանկ է,
Հայոց ոստիկան՝ կաշմի անունն է.
Եթէ այդ անունն հակառակ կարդաս՝
Պատուական «Մշակ» բառը կըստանաս.
Մշակ գիւղացի՝ պարզ, աշխատասէր,
«Մշակ» լրագիր՝ յամառ գրասէր.
Միաժամանակ երկուքն էլ պէտք են,
Մէկը հողերիդ խոկ միւսը՝ մտքիդ
Ճարտար Մշակն են։

ՀԱՍՕ

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ